ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3304 ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա
հեռ. +374-285-42036, 060521818
էլ.փոստ kapan.syuniq@mta.gov.am, info@kapan.am

3304 г.Капан, А.Манукян 5а
тел. +374-285-42036, 060521818

24 օգոստոս 2021թ. N Ե-08/3786
Ձեր _____ N _____

<<ԱՎԱ-ԲԻԼԴԻՆԳ>> ՍՊԸ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ՎԱՉԱԳԱՆ ԱԴՈՒՆՑԻՆ

Հարգելի պարոն Ադունց

Կապանի համայնքապետարանի և <<Ավա-Բիլդինգ>> ՍՊԸ միջև 2020 թվականի օգոստոսի 17-ին կնքվել է <<Կապանի համայնքապետարանի կարիքների համար բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման աշխատանքների կատարման>> <<ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-20/12/6>> ծածկագրով գնման պայմանագիրը:

Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել 2020 թվականի դեկտեմբերի 25-ը:

2020 թվականի դեկտեմբերի 25-ին կողմերի միջև կնքված Համաձայնագրով աշխատանքների կատարման վերջնաժամկետը երկարաձգվել է մինչև 2021 թվականի մայիսի 31-ը:

<<Ավա-Բիլդինգ>> ՍՊԸ նշված ժամկետում և այնուհետև աշխատանքներն իրականացրել է մասամբ՝ պայմանագրում ներառված 12 շենքերի տանիքների վերանորոգման փոխարեն վերանորոգել է 7 շենքի տանիք: Արդյունքում չեն վերանորոգվել Կապան քաղաքի թվով 5՝ Թումանյան փողոցի թիվ 9, Լեռնագործների փողոցի թիվ 1, Հ. Ավետիսյան փողոցի թիվ 2ա, Հ. Ավետիսյան փողոցի թիվ 26 և Մ. Պապյան փողոցի թիվ 5 շենքերի տանիքները, որոնց ընդհանուր պայմանագրային գինը կազմում է 31620344/երեսունմեկ միլիոն վեց հարյուր քսան հազար երեք հարյուր քառասունչորս/ ՀՀ դրամ:

Պայմանագրի 6.3 կետի համաձայն ՍՊԸ կրում է պայմանագրի գնի 0,5(զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ 158102(մեկ հարյուր հիսունութ հազար մեկ հարյուր երկու) ՀՀ դրամ տուգանքի վճարման պատասխանատվություն, որը անհրաժեշտ է վճարել Կապանի համայնքապետարանի 900315201153 հաշվեհամարին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, գործառնական վարչություն:

Հաշվի առնելով <<Ավա-Բիլդինգ>> ՍՊԸ պայմանագրային պարտավորությունների չկատարումը և հիմք ընդունելով պայմանագրի 3.1.4 կետի բ/ ենթակետը՝ համայնքապետարանը միակողմանի մասնակի լուծում է <<ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-20/12/6>> ծածկագրով գնման պայմանագիրը:

Տեղեկացնում ենք, որ <<ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-20/12/6>> ծածկագրով գնման պայմանագիրը համարվում է միակողմանի լուծված և պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ**

Կապ. Ֆինանսական բաժին
+374-285-42586